ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ՄԱՍՅԱՑՈՏՆԻ ԹԵՄ

ARMENIAN APOSTOLIC CHURCH
DIOCESE OF MASYATSOTN

ՄԵԾԱՐԳՈ
ՏԻԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24 փետրվարի, 2022թ.

Մեծարգո պարոն Համբարձումյան,

Հետանկախության տարիներին Եկեղեցու կամ տարբեր անհատների նախաձեռնությամբ կառուցվել են եկեղեցիներ և մատուռներ՝ հավատացյալների հոգևոր կարիքների բավարարման համար: Հիշյալ սրբավայրերից մի մասն առ այսօր ունի ինքնակամ շինության կարգավիճակ, և ներկայիս քայլեր են ձեռնարկվում այդ սրբավայրերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին սեփականության իրավունքով հանձնելու ուղղությամբ:

Մասիս խոշորացված համայնքում ևս առկա են մատուռներ, որոնց օրինականացման և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնելու համար խնդրում ենք Ձեր համապատասխան տնօրինությունը:

Կից ներկայացված է մատուռների ցանկը:

Կանխահայտ շնորհակալությամբ մաղթում ենք Ձեզ գործոց հաջողություններ և ամենայն բարիք:

Հարգանոք և օրհնությամբ՝

ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆ
ՄԱՍՅԱՑՈՏՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՈՒՏՔԻ ԹԻՎ 187
«25» 02 2022թ.

Առդիր՝ 1 էջ:

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Երևանյան փ., Ս. Հովհաննես Ավ. եկեղեցի. էլ. հասցե masyacotn@gmail.com